

## ՍԵՒ ՍԻՐԵՐԳ

Ահաւաստիկ, որ կը սիրեմ քեզ,  
Չար, վիրատոր, ու անխծուած,  
Ահաւաստիկ, որ կը սիրեմ ես քեզի:

Ալ քու ստուերդ պտացուց իմ հոգոյս  
Անարձագանգ դամբաններուն մէջ անլոյս,  
Ու երդմնեցուց, որ դեռ սիրեմ ես քեզի:

Թող այս գիշեր հոգիիս մէջ երգ մը լայ,  
-Ինք Փոյթ, թէ չար, թող այդ երգը քուկդ ըլլայ.  
Որովհետեւ, քոյր, ես կը սիրեմ քեզի:

Ապրի՞լ, ահեղ ճակատագրին միշտ հլու,  
Մեռնի՞լ, առանց վարկեան մը քուկդ ըլլալու,  
Խօսէ ինձ, քոյր, ախ, կը սիրեմ քեզի:

Ահա հոգիս շիրիմօրէն փակ ու չար,  
Ահա հոգիս, զոր դուն սիրել չի զիջար,  
Ահա հոգիս, որ կը սիրէ դեռ քեզի:

**Ոռոքէն Սեւակ**